	<p>Խորհրդի ձևավորման քաղաքականություն</p>	Կոդ 16.01.3	Խմբագրություն՝ 1.0
		<p>Հաստատված է Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի ..2023թ. դրոշմամբ</p>	

սահմանափակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 2

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ 2

ԳԼՈՒԽ 3. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ,
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ 3


ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 4

ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 5

ԳԼՈՒԽ 6. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ 6

ԳԼՈՒԽ 7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 6

ԳԼՈՒԽ 8. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

	Խորհրդի ձևավորման քաղաքականություն	Կոդ 16.01.3	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի ..2023թ. դրոշմամբ	


սահմանափակ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 Յունիբանկ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) Խորհրդի ձևավորման քաղաքականությամբ (այսուհետ՝ Քաղաքականություն) սահմանվում են Խորհրդի ձևավորման, անդամների ընտրության, աշխատանքների կազմակերպման և գնահատման ընդհանուր սկզբունքները և մոտեցումները:
- 1.2 Սույն Քաղաքականության նպատակն է՝ ապահովել բանիմաց, արհեստավարժ անձանց ներկայությունը Բանկի Խորհրդում՝ նպատակ ունենալով պատշաճ կարգով իրականացնել Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը:
- 1.3 Խորհրդի անդամները պետք է առաջնորդվեն սույն Քաղաքականությամբ, գործեն բարեխղճորեն, սեփական օրինակով առաջնորդելով և նպաստելով Բանկում ցանկալի մշակույթի ձևավորմանը:
- 1.4 Խորհուրդն իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է Բանկի և Բանկի խորհրդի անդամների՝ շահերի բախման կանխարգելմանն ուղղված, ինչպես նաև խորհրդի գործունեության թափանցիկության սկզբունքի ապահովմանն ուղղված գործընթացներ:
- 1.5 Սույն Քաղաքականությունը մշակվել է ՀՀ օրենսդրության, մասնավորապես «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ նաև ՀՀ ԿԲ) նորմատիվ իրավական ակտերի և Բանկի Կանոնադրության հիման վրա:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

- 2.1 Խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան ընդհանուր ժողովում Բանկի ներկա բաժնետերերի կողմից, իսկ Բանկի Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ և Բանկի Կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 2.2 Խորհրդի բոլոր անդամները պետք է տարեկան վերընտրվեն:
- 2.3 Ընդհանուր ժողովին Բանկի Խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի բաժնետերերը, ինչպես նաև Խորհուրդը՝ համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի և Բանկի Կանոնադրության դրույթների:
- 2.4 Խորհրդի անդամների ընտրությունը, նշանակումը, փոխարինումը պետք է ապահովի խորհրդի գործառույթի անընդհատության պահպանումը:
- 2.5 Խորհուրդը յուրաքանչյուր թեկնածուի առաջադրման փաստաթղթերում պետք է ներկայացնի մեկնաբանություններ թե որքանով է վերջինիս ներդրումը հանդիսանում կամ շարունակում մնալ (գործող խորհրդի անդամների դեպքում) կարևոր Բանկի համար:
- 2.6 Բանկում խրախուսվում է Խորհրդի կազմում Խորհրդի անկախ անդամների և փոքր բաժնետերերի ներկայացուցիչների առկայությունը, կարևորելով Խորհրդի անկախ և անկողմնակալ դատողություն իրականացնելու ունակությունը:
- 2.7 Խորհրդի անկախ անդամների թիվը կազմում է Խորհրդի կազմի առնվազն մեկ երրորդը:

	Խորհրդի ձևավորման քաղաքականություն	Կոդ 16.01.3	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի ..2023թ. դրոշմամբ	

սահմանափակ

- 2.8** Բանկի որևէ բաժնետիրոջ կամ շահառուի շահը չներկայացնող Խորհրդի անկախ անդամը Բանկին մատուցում է պրոֆեսիոնալ ծառայություններ՝ դրսևորելով անաչառություն և անկողմնակալություն:
- 2.9** Խորհրդի անկախ անդամի ընտրության ժամանակ Խորհրդի անդամի անկախությանն առնչվող հետևյալ հանգամանքների առկայության դեպքում վերջինիս անկախ Խորհրդի անդամ համարելու համար պետք է տրվի հստակ բացատրություն, օրինակ
- Խորհրդի անդամը ներկայացնում է Բանկի նշանակալից բաժնետիրոջը կամ
 - նախորդ 5 (հինգ) տարվա ընթացքում կամ ներկայումս հանդիսանում է Բանկի կամ նշանակալից բաժնետիրոջ (խմբի) աշխատող կամ ունի գործարար հարաբերություններ Բանկի հետ (ներառյալ Բանկից վարկ կամ փոխառություն ստանալը և դրանք Բանկին տրամադրելը), այդ թվում՝ հանդիսանում է Բանկի հետ գործարար հարաբերություն ունեցող կազմակերպության նշանակալից մասնակից կամ ղեկավար,
 - սերտ ընտանեկան կապեր ունի Բանկի ղեկավարների հետ,
 - վերջին 5 (հինգ) տարվա ընթացքում հանդիսացել է Բանկի գործող կամ նախկին արտաքին աուդիտն իրականացնող անձի, նրա հետ փոխկապակցված ընկերությունների նշանակալից մասնակից կամ աշխատող,
 - վերջին 10 (տասը) տարվա ընթացքում 6 (վեց) տարուց ավելի հանդիսացել է Բանկի Խորհրդի անդամ:

**ԳԼՈՒԽ 3. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ,
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

- 3.1** Խորհրդի անդամների ընտրության նպատակով իրականացվում է թեկնածուների ուսումնասիրություն՝ համաձայն ՀՀ ԿԲ կողմից սահմանված <<Հավուր պատշաճի>> ուսումնասիրման սկզբունքների:
- 3.2** Պետք է ուսումնասիրվի թեկնածուների գիտելիքների, հմտությունների, փորձի և մտքի անկախության համապատասխանությունը, հեղինակությունը և համբավը, ինչպես նաև գնահատվի թեկնածուի այլ զբաղվածությունը՝ արդյոք թեկնածուն ունի բավարար ժամանակ Խորհրդի անդամի պարտականությունները լիարժեք իրականացնելու համար:
- 3.3** Բանկի Խորհրդի անդամների հմտությունների ոլորտները ներառում են (սակայն չեն սահմանափակվում դրանցով) բանկային գործ, կապիտալի շուկաներ, ֆինանսներ և վարկ, հաշվապահական հաշվառում և ֆինանսական հաշվետվություններ, վճարային համակարգեր և տեղեկատվական տեխնոլոգիաներ, ռազմավարական պլանավորում, ռիսկերի կառավարում, իրավագիտություն, համապատասխանության ոլորտ, ապահովագրություն, կորպորատիվ կառավարում և ղեկավարման հմտություններ:
- 3.4** Խորհրդի անդամի թեկնածուի մասնագիտական որակավորման համապատասխանությունը գնահատելու նպատակով կիրառվում են հետևյալ չափանիշները՝
- կրթություն՝ բարձագույն,
 - համապատասխան գիտելիքներ՝ Բանկի ռազմավարությունը, բիզնես մոդելը և ռիսկերը, ինչպես նաև ՀՀ տնտեսական և շուկայական միջավայրը վերլուծելու և գնահատելու համար,

	Խորհրդի ձևավորման քաղաքականություն	Կոդ 16.01.3	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի ..2023թ. որոշմամբ	

սահմանափակ

- անհրաժեշտ գործարար որակներ և հմտություններ՝ Բանկի գործունեության առանձին ուղղությունները պատշաճ համակարգելու համար:
- աշխատանքային փորձ՝ ցանկալի է նվազագույնը 5 (հինգ) տարի ղեկավար պաշտոններում ՀՀ ֆինանսաբանկային ոլորտում, կամ
- նվազագույնը 5 (հինգ) տարի հանդիսացել է նշանակալից մասնակից կամ գլխավոր (գործադիր տնօրեն), տնօրենի տեղակալ կամ վարչության (տնօրինության) կամ խորհրդի անդամ՝ դիտարկման պահին ՀՀ-ում գործող առաջին 100 խոշոր հարկատուների ցանկում գտնվող կազմակերպությունում, կամ
- նվազագույնը 5 (հինգ) տարի հանդիսացել է նշանակալից մասնակից կամ գլխավոր (գործադիր տնօրեն), տնօրենի տեղակալ կամ վարչության (տնօրինության) կամ խորհրդի անդամ՝ արտերկրում գրանցված և/կամ գործող կազմակերպությունում, որի ակտիվները դիտարկման պահին գերազանցում են 5 (հինգ) մլն. ԱՄՆ դոլարին համարժեք գումար, կամ
- առնվազն վերջին 3 (երեք) տարին անընդմեջ հանդիսանում է միջազգային ֆինանսական կազմակերպության ներկայացուցիչ, կամ
- ունի տնտեսագիտության կամ կառավարման բնագավառում ակադեմիական կամ հետազոտական աշխատանքի առնվազն 4 (չորս) տարվա մասնագիտական ստաժ:

3.5 Խորհրդի անդամի թեկնածուները պետք է համապատասխանեն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ԿԲ «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերի մասին կանոնակարգ 1» և ՀՀ ԿԲ այլ նորմատիվ ակտերով սահմանված բարեվարքության չափանիշներին:


ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1 Բանկի Խորհրդի կազմը և կառուցվածքը պետք է ապահովեն Բանկի բոլոր բաժնետերերի և այլ շահագրգիռ կողմերի շահերի արդար և անաչառ ներկայացումը:

4.2 Խորհրդի քանակական կազմը հիմնվում է Խորհրդի անդամների որակավորման, գիտելիքների, փորձի և հմտությունների վրա, ինչպես նաև խորհրդի հավաքականորեն անհրաժեշտ որակավորումներ ունենալու սկզբունքի վրա և միտված է ապահովել խորհրդի որպես կառավարման կոլեգիալ ամբողջական մարմին իր գործառույթների իրականացման արդյունավետության ապահովմանը, գործարար սովորույթների, կորպորատիվ մշակույթի և արժեքների պահպանմանը, տեսակետների բազմազանության խթանմանը:

4.3 Բանկը հավասար հնարավորությունների գործատու է, ուստի Խորհրդի ձևավորման գործընթացում առաջնորդվում է բոլոր տեսակի խտրականության (սեռային պատկանելիության, տարիքային, աշխատունակության, ընտանեկան կարգավիճակի, հավատքի, համոզմունքների, ռասայական, էթնիկական պատկանելիության կամ ազգային հիմքերով) բացառման սկզբունքով:

4.4 Խորհուրդը սահմանում և տարանջատում է Խորհրդի անդամների լիազորությունների շրջանակները, Խորհրդի անդամների միջև պարտականությունների բաշխումը:

	Խորհրդի ձևավորման քաղաքականություն	Կոդ 16.01.3	Խմբագրություն՝ 1.0
		Հաստատված է Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի ..2023թ. որոշմամբ	

սահմանափակ

4.5 Խորհրդի գործունեությունը և կազմը թարմացվում է հաշվի առնելով արտաքին միջավայրի փոփոխությունները և Բանկի ռիսկայնության մակարդակը. Բանկի Խորհուրդը պետք է համաչափ լինի Բանկի չափին, բարդությանը, կառուցվածքին, տնտեսական նշանակությանը, ռիսկի նկարագրին և բիզնես մոդելին:

4.6 Խորհրդի արդյունավետության բարձրացման և ընթացիկ օպերատիվ հարցերի շուրջ աշխատանքային քննարկումներ կազմակերպելու և խորհրդին ամբողջական մասնագիտական տեղեկատվության տրամադրելու նպատակով Խորհուրդն առնվազն ձևավորվում է ռիսկերի, աուդիտի, անձնակազմի և պարզևատրումների գծով Խորհրդին կից հանձնաժողովներ՝ Խորհրդին ժամանակին պատշաճ, հավաստի և ամբողջական տեղեկատվություն տրամադրելու և խորհրդի կողմից տեղեկացված որոշումներ կայացնելու համար: Խորհուրդը սահմանում է այդ հանձնաժողովների մանդատը, գործունեության շրջանակը, ակնկալվող արդյունքը, աշխատանքային ընթացակարգերը, հաշվետվողականությունը, հանձնաժողովների կազմը, հանձնաժողովում ներգրավվելու առավելագույն ժամկետները՝ հանձնաժողովներին (այդ թվում՝ որպես հանձնաժողովի ղեկավար) նախատեսելով անկախ խորհրդի անդամների մասնակցությունը:

4.7 Բանկի ներքին հսկողության համակարգի և ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունն ապահովելու համար խորհուրդն իր իրավասությունների շրջանակներում նշանակում կամ հաստատում է հսկողական գործառույթների ղեկավարներին (ներքին աուդիտ, ռիսկերի կառավարում, համապատասխանություն), ապահովում հսկողական գործառույթ իրականացնող անձանց բավարար իրավասություններ, անկախություն և ռեսուրսներ իրենց պարտականությունները կատարելու համար, ինչպես նաև վերջիններիս տրամադրում է հասանելիություն խորհրդին և կից հանձնաժողովներին:


ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

5.1 Խորհրդի արդյունավետության ապահովման նպատակով իրականացվում է Խորհրդի որպես կոլեգիալ մարմնի և Խորհրդի առանձին անդամների գործունեության պարբերաբար գնահատում և ինքնագնահատում՝ Խորհրդի կողմից սահմանված ընթացակարգով: Գնահատվում է նաև Խորհրդին կից հանձնաժողովների անդամների՝ կոլեկտիվ գիտելիքը, կարողությունները և փորձը հանձնաժողովի գործառույթների կատարման բավարարման համար (իրենց պատասխանատվության ներքո ոլորտի վերաբերյալ բավարար գիտելիքներ ունենալու, համապատասխան իրավասություններով և անկախությամբն օժտված լինելու մասով):

5.2 Գնահատումն իրականացվում է Խորհրդի մեծությունը, Խորհրդի անդամների որակավորումները, գիտելիքները, փորձն ու հմտությունները որոշելու, ինչպես նաև անկախ, օբյեկտիվ, հիմնավորված և տեղեկացված դատողությունների իրականացման ունակությունները գնահատելու համար:

5.3 Գնահատումը պետք է ցույց տա թե որքանով արդյունավետ են միասին աշխատում Խորհրդի անդամները, իսկ անհատական գնահատումը՝ թե արդյոք Խորհրդի անդամները շարունակում են արդյունավետ ներդրում ունենալ Խորհրդի աշխատանքներում:

5.4 Գնահատումը պետք է նախատեսի նաև Բանկի Խորհրդի և Խորհրդի առանձին անդամների գործունեության համապատասխանությունն էթիկայի սահմանված կանոններին և չափանիշներին:

	<p>Խորհրդի ձևավորման քաղաքականություն</p>	Կոդ 16.01.3	Խմբագրություն՝ 1.0
		<p>Հաստատված է Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի ..2023թ. որոշմամբ</p>	

սահմանափակ

5.5 Խորհրդի աշխատանքի գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ, որի կազմակերպման համար պատասխանատու է Խորհրդի նախագահը:

5.6 Խորհրդի նախագահը կարող է դիտարկել նաև արտաքին խորհրդատվությամբ միջոցով Խորհրդի գնահատման հնարավորությունը:

ԳԼՈՒԽ 6. ԽՈՐՀՐԴԻ ԱՆՊԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Խորհրդի յուրաքանչյուր անդամ պատասխանատու է Բանկի ընդհանուր և իր անձնական համակարգման տակ գտնվող կոնկրետ ուղղությունների համար:

6.2 Նշված ուղղությունների և դրանցից բխող իրավասությունների բաշխումն իրականացվում են Բանկի Խորհրդի որոշմամբ:

6.3 Խորհրդի անդամները վարձատրվում են իրենց աշխատանքի համար՝ ըստ կատարված աշխատանքի բնույթի, խորհրդի և հանձնաժողովների նիստերին մասնակցության, ընդ որում՝ Խորհրդի անդամների վարձատրության մեծ մասը պետք է լինի հաստատուն բնույթի:

6.4 Խորհրդի անդամների վարձատրության չափը հաստատվում է Խորհրդի որոշմամբ՝ Խորհրդին կից Անձնակազմի և պարգևատրումների հանձնաժողովի առաջարկի հիման վրա:

6.5 Խորհրդի յուրաքանչյուր անդամի վարձատրության չափը սահմանվում է՝ հիմք ընդունելով վերջինիս մասնագիտական որակավորումը և իր կողմից համակարգվող Բանկի գործունեության ուղղությունները:

6.6 Խորհրդի անդամների վարձատրության համակարգը պետք է համապատասխանի Խորհրդի անդամների և Բանկի երկարաժամկետ շահերին, խրախուսի ռիսկերի առողջ և արդյունավետ կառավարումը:

ԳԼՈՒԽ 7. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Խորհուրդը պետք է պարբերաբար (առնվազն տարեկան մեկ անգամ) թարմացնի Խորհրդի պարտականությունները և հիմնական գործունեությունը, Խորհրդի կառուցվածքը, Խորհրդի և կից հանձնաժողովների չափը և կազմը սահմանող ներքին իրավական ակտերը՝ համապատասխանեցնելով դրանք Բանկի չափին, բարդությանը, ռիսկի նկարագրին, բիզնես մոդելին և զարգացման ուղղություններին:

7.2 Խորհրդի և Խորհրդի կից հանձնաժողովների նիստերը, դրանց ընթացքում քննարկված հարցերը և կայացված որոշումները (ներառյալ հատուկ կարծիքները) պետք է պատշաճ կերպով արձանագրվեն:

ԳԼՈՒԽ 8. ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Խմբագրման համար	Խմբագրման ամսաթիվ և որոշում	Խմբագրման նկարագրություն
1	Բաժնետերերի ընդհանուր ժողովի ..2023թ. որոշում	